Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Հակոբ Արշակյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Շվեյցարական Համադաշնության ք. Ժնև, 2019թ. ապրիլի 8-10-ը:

4. Հրավիրող կողմը.

Հեռահաղորդակցության Միջազգային Միություն (ՀՄՄ), ՄԱԿ-ի Կրթական, Գիտական և Մշակութային Կազմակերպություն (UNESCO), ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր (UNDP) և ՄԱԿ-ի մի շարք այլ հեղինակավոր կազմակերպություններ:

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Տեղեկատվական Հանրության թեմայով Համաշխարհային Գագաթաժողովի (WSIS) հերթական համաժողովի շրջանակներում կայանալիք նախարարական մակարդակի նստաշրջանին:

6. Քննարկված թեմաները.

WSIS 2019 նախարարական մակարդակի նստաշրջանի օրակարգում ընդգրկված են եղել մի շարք հարցեր տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների ոլորտում առկա իրավիճակի, հետագա զարգացման, ինչպես նաև դրանց շրջանակում երկրների միջև համագործակցության վերաբերյալ:

Յուրաքանչյուր խորագրով ինտերակտիվ երկխոսությունների և նախարարական կլոր սեղանի նիստի ընթացքում ավելի, քան 130 երկրներից ժամանած ոլորտի բարձրաստիճան ներկայացուցիչները, այդ թվում նաև Հայաստանը, ելույթներ են ունեցել՝ ներկայացնելով տվյալ ուղղվածությամբ իրենց երկրում առկա իրավիճակը, կառավարությունների կողմից տեսլականների ու միտումների վերլուծությունը, հնարավորություններն ու ակնկալիքները, ինչպես նաև ծառացած մարտահրավերների համար լուծումներ փնտրելու տարբերակները:

Նախարար Հակոբ Արշակյանը խոսել է Հայաստանի տեխնոլոգիական ոլորտում տեղի ունեցող զարգացումների, ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության ու առաջնահերթությունների, Հայաստանի մեծ ներուժի և դրա հիման վրա բարձր ու տեղեկատվական տեխնոլոգիաների հետագա բարելավման մասին: Նա ներկայացրել է ոլորտային զարգացումների կարևորությունը երկրում թվայնացման, տնտեսության առաջընթացի և Հայաստանում միջազգային

ներդրումների նպատակահարմարության հարցում: Հ. Արշակյանն ընդգծել է Հայաստանի դերը, որպես նշված ոլորտում տարածաշրջանի ամենաարագ զարգացող երկիրը, և շեշտել, որ դա միայն սկիզբն է, քանի որ երկրի կառավարությունը դեռ շատ իրականացման ենթակա նախագծեր և նախաձեռնություններ ունի:

Նախարարական մակարդակի նստաշրջանն ավարտվել է ապրիլի 10-ի եզրափակիչ նիստով, որի ընթացքում WSIS 2019-ի Նախագահը ներկայացրեց ընդհանուր ամփոփում, իսկ առանձին թեմաներով քննարկումների ղեկավարները ներկայացրել են վերջիններիս արդյունքները: Դրանք մանրամասն ներկայացված են 2019թ. WSIS Համաժողովի Քաղաքական Հայտարարությունների և Նախարարական Նստաշրջանի արդյունքներում, որը կցվում է սույն հաշվետվությանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ի լրումն միջոցառման հիմնական հատվածի՝ Նախարար Հակոբ Արշակյանը նաև երկկողմ հանդիպումներ է ունեցել ոլորտում առաջընթաց գրանցած մի շարք երկրների (Թայլանդ, Իրան, Իրաք, Բուլղարիա, Վրաստան, Բենին, Բութան, Բանդլադեշ և այլն) բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնց նպատակը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի Հանրապետության համագործակցությունը միջազգային համապատասխան կառույցների հետ ընդլայնելն էր, ինչպես նաև նրանց փորձն ու մեթոդներն ուսումնասիրելը, որոնք կխթանեն տեղեկատվական հանրության զարգացմանը, արդյունավետությանը, նորարար և արդիական լուծումներին: Նշված հանդիպումները դրական արձագանք ունեցան կողմերի համար, պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ արդեն առկա համագործակցությունների եզրերը խորացնելու և նոր համագործակցության հնարավորություններ ստեղծելու վերաբերյալ:

Հայաստանի համար մեծ կարևորություն ուներ ոլորտում ամենախոշոր համաշխարհային մակարդակի կառույցը և միջոցառման կազմակերպիչներից մեկը հանդիսացող Հեռահաղորդակցության Միջազգային Միության (ՀՄՄ) Գլխավոր Քարտուղար Հուլին Ժաոյի հետ հանդիպումը, որի ժամանակ քննարկվել են Հայաստանում հեռահաղորդակցության զարգացման հեռանկարները և տեսլականները: Հ. Ժաոն պատրաստակամություն է հայտնել լիարժեք աջակցություն ցուցաբերել Հայաստանում ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումներին:

Թայլանդի Թվային Տնտեսության և Հասարակության նախարար Պիչետ Դուրունգավերոյի հետ քննարկվել է Հայաստանի և Թայլանդի համագործակցության հնարավորությունը բարձր տեխնոլոգիական ոլորտում: Ներկայացվել են Հայաստանում ստեղծված և հաջողությամբ կիրառվող տեխնոլոգիաները և հարթակները, և որոշվել է ստեղծել աշխատանքային հարթակ հետագա քննարկումների և համագործակցության համար:

Իրանի Տեղեկատվական և Հեռահաղորդակցության Տեխնոլոգիաների նախարարի Մոհամադ Ջավադ Ազարի Ջահրոմիի հետ քննարկվել են հեռահաղորդակցության ոլորտում տարածաշրջանային ինտեգրացիոն ծրագրերը, մասնավորապես՝ Հայաստանի տարածքով դեպի Իրան, Իրաք և Պարսից ծոցի երկրներ օպտիկամալուխային տեղեկատվական ենթակառուցվածքների զարգացումը, և այլ հարցեր:

Հարկ է նշել նաև բավականին արդյունավետ հանդիպումը Բաշխված Անվանումների և Թվերի Ինտերնետ Կորպորացիայի (ICANN) գլխավոր գործադիր տնօրեն և նախագահ Գյորան Մարբիի

հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանում ինտերնետի հասանելիությունը, ինչպես նաև հայկական կայքերի դոմեյնների լոկալիզացմանը (հայաֆիկացմանը) և թվային ենթակառուցվածքների զարգացմանը վերաբերվող հարցեր:

Առավել շոշափելի էին ոլորտում երկու խոշոր ընկերությունների ղեկավարների հետ կայացած հանդիպումների արդյունքները: Իրերի ինտերնետի (IoT) համար նախատեսված կապի սարքերի և ենթակառուցվածքների ներդրումով զբաղվող ֆրանսիական «Sigfox» ընկերության գործադիր տնօրեն Լյուդովիկ Լե Մոանը պատրաստակամություն է հայտնել համագործակցելու Հայաստանում գտնվող IoT ստարտափների հետ, ինչը երկուստեք կստեղծի նոր հնարավորություններ ամբողջ աշխարհում տեղական մշակման տեխնոլոգիական արտադրանքի տարածման համար (հղում):

Գուգլ (Google) ընկերության Ինժեներական մասի տնօրեն Սառա Քլաթըրբաքի հետ հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել է հայաստանյան և հայալեզու վիդեոարտադրանքը զարգացնելու հնարավորությունը, որը կխթանի նաև խոսքի և կարծիքի ազատությանը Հայաստանում, ինչպես նաև մեծ ներդրում կունենա աշխարհասփյուռ հայության համար՝ հայերեն լեզվի իմացությունը պահպանելու տեսանկյունից: Քննարկվել են այն հստակ քայլերը, որոնց լուծման արդյունքում Հայաստանի բնակչությունը, լրատվամիջոցները և բիզնեսը հնարավորություն կունենան ավելի համապարփակ օգտվել «Google»-ի և «Youtube»-ի ծառայություններից: Անդրադարձ է եղել «Google»-ին առնչվող մի շարք այլ խնդիրների, այդ թվում՝ «Google Maps»-ում տեղ գտած անճշտություններին, ինչի պատճառով նավիգացիան Հայաստանի տարածքում բարդացված է և որոշ ճանապարհներ քարտեզի վրա գծագրվում են խիստ սխալներով (հղում):

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կից ներկայացվող 2019թ. WSIS Համաժողովի Քաղաքական Հայտարարությունների և Նախարարական Նստաշրջանի արդյունքներում մանրամասն անդրադարձ է կատարված բոլոր թեմատիկ քննարկումներին ու դրանց հիման վրա համաձայնեցված պայմանավորվածություններին:

Իրաքի Կապի նախարար Նայիմ Յուսիրի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել երկկողմ համագործակցության աշխատանքային խումբ ստեղծել և երկուստեք այցելություններ կազմակերպել թվային հեռուստատեսության ցանցի ներդրման, կրթական համակարգերի, թվային հարթակների, ստարտափ էկոհամակարգերի զարգացման և այլ նեղ ոլորտային ուղղվածությունների բարելավման համար:

Հարկ է նշել, որ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն Պոլիտեխնիկական համալսարանում կազմակերպել IoT թեմայով երեք ամիս տևողությամբ դասընթացներ՝ «SIGFOX»-ի ունեցած և աշխարհի տարբեր երկրներում տեղ գտած կրթական հարթակի միջոցով, որի արդյունքում ուսանողները կծանոթանան IoT տեխնոլոգիաներին և հնարավորություն կստանան մասնակցել միջազգային ցանցի աշխատանքներին, ինչպես նաև ստեղծել իրենց «IoT Startup»-երը:

Պայմանավորվածություն կա նաև Google ընկերության հետ, ըստ որի երկու կողմից ներգրավվելու են մասնագետներ, որոնք կաշխատեն հանդիպման ընթացքում Նախարարի կողմից բարձրացված բոլոր հարցերի լուծման ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառման ընթացքում ունեցած ելույթում, ինչպես նաև դրան նախորդած և հաջորդած բոլոր երկկողմ ու բազմակողմ հանդիպումների ժամանակ Նախարար Հակոբ Արշակյանը հրավիրել է արդեն իսկ մեկնարկած բանակցություններն ու համագործակցության տարբեր ձևերի շուրջ քննարկումները շարունակել 2019թ. հոկտեմբերի 6-9-ին Երևանում կայանալիք Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համաշխարհային Կոնգրեսի (WCIT2019) շրջանակներում: Սա հիանալի առիթ կհանդիսանա ներգրավելու ու արդյունավետ բանակցություններ անցկացնելու համար ոլորտային բոլոր խոշոր ընկերությունների, որոշում կայացնողների, բարձր մակարդակի ներկայացուցչական կազմերի և այլ նշանակալի դերակատարների հետ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հակոբ Արշակյան 16.04.2019թ.